

Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Շաբաթ, 14 Յունուար 2006ը տօնն էր Սուրբ Յովհաննու Կարապետի, եւ անուանակոչութիւն՝ Յովիվուտի Սուրբ Կարապետ Մայր եկեղեցւոյ:

Այս տօներուն առիթով, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Կիրակի, 15 Յունուարին Ս. Պատարագ մատուցեց եւ ապա, մատաղօրհնէքի արարողութիւն կատարեց Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ:

Ս. Խորանին կը սպասարկէին Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Զինյ. Վասիլեան:

Ներկայ էին եկեղեցւոյ բարերար Տէր եւ Տիկին Վահէ եւ Վերոնիք Կարապետեան ամուլը:

Յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն ի յիշատակ բոլոր այն բարերարներուն եւ ծառայողներուն, որոնք գործած են ի խնդիր եկեղեցւոյ պայծառութեան ու արդէն առյաւէտ բաժնուած են մեզմէ:

Հոգեհանգստեան պաշտօնի աւարտին, տեղի ունեցաւ աւանդական մատաղօրհնէք:

Արարողութիւններէն ետք, ներկաները համախմբուեցան եկեղեցւոյ սրահը, ուր հովիւին եւ հոգաբարձութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ սիրոյ սեղան:

Ընտանեկան ջերմ մթնոլորտի մէջ, բարի գալուստի խօսք արտասանեց Յոգեւոր Յովիւր՝ Արժ. Տ. Վիգէն Զինյ. Վասիլեան: Պաշտօնական յայտագիրին կողքին, իրագործուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Նաեւ կատարուեցաւ մոմավառութիւն:

Տարիներու բարի աւանդութիւն է, որ եկեղեցւոյ անուանակոչութեան նուիրուած այս հանդիսութեան առիթով, հոգաբարձութիւնը պատուէ անձնորդի ու վաստակաշատ ծառայողներ: Այս տարի, հոգաբարձութիւնը պատուեց Տոքթ. Նաւասարդ Գազազեան:

Օրհնութեան եւ գնահատանքի խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ այս առիթով յատուկ գնահատագիր մը յանձնեց Տոքթ. Գազազեանին, որ տասնամեակներ շարունակ, իբրեւ Ազգային Երեսփոխան եւ Հոգաբարձութեան անդամ անսակարկ կերպով ծառայած է եկեղեցւոյ ու ծխական համայնքին:

THE FEAST OF ST. JOHN THE FORERUNNER

On Sunday January 15, 2006 on the occasion of the Feast of St. John the Forerunner and the name day of Hollywood's St. Garabed Church, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Holy Mass and Blessing of the Offerings Services at St. Garabed Armenian Apostolic Church.

Serving at the Altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and Pastor Rev. Fr. Viken Vassilian. The sponsors of the church, Mr. & Mrs. Vahe & Veronik Karapetian were also present.

At the conclusion of Holy Mass, requiem services took place remembering departed sponsors and volunteers who devoted their lives and services to the flourishing of the church.

Following the requiem service was the traditional Blessing of the Offerings, after which the faithful gathered in the Church Hall for a reception, that began with a welcoming remark by Rev. Fr. V. Vassilian followed by an artistic program.

In keeping with tradition, the Board of Trustees this year honored devoted servant Dr. Navasart Kazazian, to whom Archbishop Mardrossian presented a special certificate after conveying his blessings and appreciation. Dr. N. Kazazian has served as Delegate and Member of Board of Trustees of the church for many decades.